



ԳՎՍ 7.8. Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներ: Ռեկրեացիոն ռեսուրսներ

1. Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսներ են կոչվում բնության այն բոլոր տարրերը, էներգիայի տեսակները, նյութերը, որոնք արդյունահանվում են կամ կարող են արդյունահանվել օվկիանոսի ջրից, մերձափնյա գոտուց և հատակից:

Համաշխարհային օվկիանոսն իսկապես բնական ռեսուրսների վիթխարի շտեմարան է, մի այնպիսի միջավայր, որտեղ մարդը կարող է ծավալել բազմաբնույթ տնտեսական գործունեություն: Բնութագրենք և գնահատենք օվկիանոսի բնական ռեսուրսները:

2. Ջրում լուծված հանքային հարստություններից են մագնեզիումը, ծծումբը, բրոմը, պղինձը, ուրանը, արծաթը, ոսկին: Համաշխարհային օվկիանոսում կան նավթագազաբեր տարբեր ավազաններ (Հյուսիսային ծով, Պարսից, Մեքսիկական ծոցեր և այլն), որոնց նավթի պաշարները գնահատվում են 120-150 մլրդ տ: Կարևորվում են նաև մետաղական օգտակար հանածոները՝ երկաթի, պղնձի, նիկելի, անագի, սնդիկի, ոսկու, իլմենիտի, ոչ մետաղականներից՝ մայրցամաքային ծանծաղուտում՝ սաթի, ֆոսֆորիտների պաշարները: Օվկիանոսի հատակում տարածված են երկաթամանգանային կոնկրեցիաները:

3. Ռեկրեացիոն ռեսուրսները լինում են բնական (ծովերի, գետերի, լճերի ափեր, հանքային ջրեր (այդ թվում՝ բուժիչ ջրեր, ցեխեր), անտառներ, լեռնային շրջաններ) և մարդածին (պատմաճարտարապետական հուշարձաններ, թանգարաններ, պատկերասրահներ և տեսարժան այլ վայրեր):

Համաշխարհային օվկիանոսն ունի ռեկրեացիոն ռեսուրսների վիթխարի ծավալներ և ներուժ: Աղի ջուրը, ավազոտ լողափերը, արևափայլի բարձր տևողությունը, համեմատաբար մաքուր օդը հանգստի, ծովային զբոսաշրջության, էքսկուրսիոն և առողջարարական նպատակներով օգտագործելու աննախադեպ հնարավորություններ են ընձեռում: